



Մ. ՅԱԿՈԲԻ Ն Ե Ր Ս Է Ն

* Ծր. 3 Յուլիս.— Ս. Մեծին Ներսիսի և Խաչայ Եպիսկոպոսին: Մայր Տաճարի Ասագ Սեղանին վրայ իր անդրանիկ Ս. Պատարագը մատուց նորընծայ Հոգշ. Տ. Հայկազուն Արդ. Մեղզոնեան: Ներկայ էր Ամեն. Պատրիարք Ս. Հայրը:

* Կիր. 4 Յուլիս.— Բարեկենդան Ս. Լուսաորչի պահոց: Ս. Պատարագը մատուցուցաւ Մայր Տաճարի Ասագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տառնուլարեան, ուսուցիչն ու վարժիչը նորընծայ Տ. Հայկազուն Արեղային, որ կը սպասարկէր Ս. Պատարագին:

* Ուր. 9 Յուլիս.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսաորայեւո Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ապանեան:

* Ծր. 10 Յուլիս.— Գիւտ Նշխարաց Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաորչին: Ս. Պատարագը մատուցուցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատուռին մէջ, ուր ըստ աւանդութեան թաղուած է մասունքը Ս. Լուսաորչի: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տառնուլարեան:

* Կիր. 11 Յուլիս.— Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնատան մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ասպետ Արդ. Պալեան:

* Դշ. 14 Յուլիս.— Թարգմանչաց հանդիսատք նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսաորայեւո Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ապանեան:

* Եշ. 15 Յուլիս.— Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց Սահակայ և Մեսրոպայ (Տօն ազգային): Ըստ տվորութեան, Մայր Տաճարի Ասագ Սեղանին վրայ Ս. Պատարագ մատուց Ս. Թարգմանչաց Երկր. Վարժարանի Տեսուչը՝ Հոգշ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գաբրիէան:

* Ծր. 17 Յուլիս.— Ս. Տրդատայ թագ. մերոյ, Աշխէն տիկնոջն և Խոսրովի դիտողն: Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան:

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Ծահէ Արքեպիսկոպոս Աճէմեան:

* Կիր. 18 Յուլիս.— Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնի Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տառնուլարեան: Երթ ու դարձի թափօրները գլխաւորեց Գերշ. Տ. Ծահէ Արքեպիսկոպոս:

ԲԵՆԵՏՈՆԵԿԵՆԸ



* Կիր. 4 Յուլիս.— Ամերիկայի Միացեալ Նահանգներու Անկախութեան 200-ամեակին առթիւ, Ամերիկեան Ընդհ. Հիւպատոսին կողմէ սարքուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ամեն. Պատրիարք Ս. Հայրը և Գերշ. Տ. Ծառէ Արքեպս. Աճէմեան:

* Դշ. 14 Յուլիս.— Երեկոյեան, Ֆրանսայի ազգային տօնին առթիւ, Հիւպատոսարանին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ապսմեան, Հոգշ. Տ. Կիրեղ. Մ. Վրդ. Գաբրիէան և Տիար Կ. Հինդեան:

* Դշ. 28 Յուլիս.— Բրիտանական նոր Ընդհ. Հիւպատոս Մայքլ Հաննամի ի պատիւ, Ամերիքըն Քօլօնիի մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Աւագ Թարգման Հոգշ. Տ. Գեորգ Վրդ. Նազարեան և Տիար Գ. Հինդեան:

* Որ. 28 Յուլիս.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Ծառէ Արքեպս. Աճէմեան:

* Ծր. 24 Յուլիս.— Ս. Երկոտասան առաքելոցն Քրիստոսի և Պօղոսի՝ երեքտասաներորդ առաքելոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայք. Տաճարի Ս. Պօղոսի վերնամատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկազուն Արդ. Մելգոնեան:

* Կիր. 25 Յուլիս.— Բարեկենդան Վարդապետի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնատան մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տառնտարեան:

* Որ. 30 Յուլիս.— Նախատօնակը պաշտուեցաւ Մայք. Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատուռին մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս Ապսմեան:

* Ծր. 31 Յուլիս.— Յիշատակ Տապանակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Էջմիածին մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տառնտարեան:

— Ս. Յակոբեանց Մայք. Տաճարին մէջ պաշտուած Աղակերպութեան հանդիսաւոր նախատօնակին և անոր յաջորդող Տեառնեղբօր զահակալութեան հանդիսութեան նախագահեց Գերշ. Տ. Ծառէ Արքեպս. Աճէմեան:

— Գերշ. Սրբազանը նախագահեց նաև իրիկնադէմին, Մայք. Տաճարին մէջ պաշտուած «Ծկեսցէ»ի և Հսկման արարողութիւններուն: